ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

03.07.2015թ.
252-ի 3

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
պարոն Վահրամ Շահինյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Շահինյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ քրեական գործ է հարուցվել ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2015թ.-ի հունիսի 23-ին Բաղրամյան պողոտայում ոստիկանների գործողությունների իրավաչափության վերաբերյալ,
2. Խնդրում ենք հայտնել, թե հարուցված քրեական գործերը ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ինչ հանցագործությունների հատկանիշներով են (ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածը եւ մասը),
3. Քանի՞ քրեական գործ է հարուցվել ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2015թ.-ի հունիսի 23-ին Բաղրամյան պողոտայում ոստիկանների կողմից լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու հատկանիշներով (ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի որ մասերով):

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան